ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՎԲԿ-ԳՀԾՁԲ-19/23»

ք. Վանաձոր « 29 » մարտի 2019 թ.

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն ի դեմս տնօրենի ժ/պ՝ Վ. Մկրտչյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Վ.Ն.Ս. Սերվ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Վ. Գրիգորյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով

(գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը

միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ	«Վ.Ն.Ս. Սերվ» ՍՊԸ
ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42	ք. վանաձոր, Կ. Դեմիրճյան 1 բ
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Վանաձոր մ/ճ	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150004484110100	h/h 1150002715650100
ՀՎՀՀ 0694592	ՀՎՀՀ 06940308
Տնօրենի ժ/պ՝ Վ. Մկրտչյան	Տնօրեն՝ Վ. Գրիգորյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրության չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 29 » մարտի 2019 թ. կնքված
«ՎԲԿ-ԳՀԾՁԲ-19/23» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	2019 թ-ի իրականացվելիք ծառայության ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	50111130	Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում	դրամ	5 000 000	1	ք.Վանաձոր, Գ. Նժդեհի 2/42	01.04.2019 թ.-15.12.201919թ

		չ/մ.	Գին	Տեխնիկական բնութագիր
	Չափաբաժին 1			
1,001	Առջևի կոճղակ /փոխարինումով/ колодка/	հատ	22000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,002	Ետևի կոճղակ /փոխարինումով/ колодка/	հատ	20000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,003	Հովացուցիչի փոկ/փոխարինումով/ ремень/ вентелятора	հատ	15000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,004	Առջևի մեղմիչ /փոխարինումով /амортизатор/	հատ	36000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,005	Հետևի մեղմիչ /փոխարինումով/ амортизатор/	հատ	35000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,006	Զսպանի վռան/փոխարինումով/втулка рессора/	հատ	10000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,007	Առջևի բոմբ/փոխարինումով	հատ	14000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,008	Մեղմիչի գլխի ռեզին/փոխարինումով	հատ	15000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,009	Խլացուցիչի ռեզին/փոխարինումով /глушитель/	հատ	6000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,01	Հետևի արգելակի ափսե/փոխարինումով/ тарелка заднего тормоза/	հատ	45000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,011	Գլխավոր բաք/փոխարինումով/главный бачок/	հատ	40000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,012	Աշխատանքային բաք/փոխարինումով/ рабочий бачок/	հատ	25000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,013	Կոնուսի բաք/փոխարինումով/ бачок конуса/	հատ	15000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,014	Զգաձող/փոխարինումով /тяга/	հատ	14000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,015	Հոդակապ /փոխարինումով /шарнир/	հատ	10000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,016	Բացքի ականոց/փոխարինումով/втулка развала/	հատ	10000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար

1,017	Կայունարար/փոխարինումով /стабилизатор/	հատ	40000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,018	Կայունարարի ռեզին /փոխարինումով	հատ	10000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,019	Կախոց/փոխարինումով/подвесной/	հատ	25000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,02	Դիսկ/փոխարինումով	հատ	40000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,021	Պլիտա երկաթե/փոխարինումով	հատ	70000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,022	Վիժիվվնոյ/փոխարինումով	հատ	18000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,023	Բենզինի զտիչ /փոխարինումով	հատ	6000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,024	Օդի զտիչ /փոխարինումով	հատ	6000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,025	Կունգ /փոխարինումով ступица	հատ	45000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,026	Ծայրակալ /փոխարինումով/ наконечник/	հատ	12000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,027	Կունգի առանցքակալ /փոխարինումով /подшипник ступицы/	հատ	15000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,028	Կարդանի լիսեռի առջևի մաս/փոխարինումով /передняя половинка карданного вала/	հատ	40000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,029	Կոլոդկա հետևի /փոխարինումո/վ колодка задняя/	հատ	22000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,03	Ջրի պոմպ /փոխարինումով/водяной насос/	հատ	30000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,031	Հովացուցիչ /փոխարինումով /радиатор/	հատ	50000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,032	Բենզինի պոմպ /փոխարինումով/бензонасос/	հատ	35000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,033	Խլացուցիչ /փոխարինումով /лушитель/	հատ	25000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,034	Շարժիչի բարձիկ /փոխարինումով /одушка матора/	հատ	15000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,035	Շարժիչի ունկ /փոխարինումով / ушка матора/	հատ	3000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,036	Հովացուցիչի ճկախողովակ/փոխարինումով/ патрубка радиатора/	հատ	8000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,037	Վառարանի փական/փոխարինումով/ краник печки/	հատ	8000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,038	Թերմոստատ /փոխարինումով/термостат/	հատ	25000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,039	Звмок зяжитаеия	հատ	22000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,04	Դռան փական /փոխարինումով	հատ	8000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,041	Դռան փականի լեզվակ մեծ և փոքր/փոխարինումով	հատ	6000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,042	Զսպանի գլխավոր թիթեղ /փոխարինումով/ главный лист рессора/	հատ	40000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար
1,043	Առջևի կոճղակ/Передняя колодка/	հատ	16000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար
1,044	Ջրի հովացուցիչ /փոխարինումով/ водяной радиатор/	հատ	45000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար
1,045	Առջևի հոդակապ /փոխարինումով/ шарнир/	հատ	10000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար

1,046	Անվահեծի հավասարակշռում/բալանսիրովկա/	հատ	1000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>>,2017թ. Ուազ 39623 և Վազ 21214 մակնիշի ավտոմեքենաի համար
1,047	Անվահեծի վուլկանացում	հատ	1000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>>,2017թ. Ուազ 39623 և Վազ 21214 մակնիշի ավտոմեքենաի համար
1,048	Անվախուցի նորոգում	հատ	1000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>>,2017թ. Ուազ 39623 և Վազ 21214 մակնիշի ավտոմեքենաի համար
1,049	Անվախուցի փոխարինում	հատ	1000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>>,2017թ. Ուազ 39623 և Վազ 21214 մակնիշի ավտոմեքենաի համար
1,05	Անվադրոի նորոգում	հատ	2000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>>,2017թ. Ուազ 39623 և Վազ 21214 մակնիշի ավտոմեքենաի համար
1,051	Անվադրոի փոխարինում	հատ	1500	2010թ. <<ֆորդ տրանզիտ>>,2017թ. Ուազ 39623 և Վազ 21214 մակնիշի ավտոմեքենաի համար
1,052	ՈՒԱԶ մեկնարկիչի վերանորոգում	հատ	18000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար
1,053	ՈՒԱԶ- ռելե-ռեգուլյատորի վերանորոգում	հատ	8000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար
1,054	ՎԱԶ 21-214-ի դինամոյի վերանորոգում	հատ	15000	2010թ.Վազ 21214 մակնիշի ավտոմեքենաի համար
1,055	ՎԱԶ 21-214-ի մեկնարկիչի վերանորոգում	հատ	22000	2010թ.Վազ 21214 մակնիշի ավտոմեքենաի համար
1,056	ՎԱԶ 21-214-ի ռելե-ռեգուլյատորի վերանորոգում	հատ	8000	2010թ.Վազ 21214 մակնիշի ավտոմեքենաի համար
1,057	Ֆորդի դինամոյի վերանորոգում	հատ	20000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,058	Ֆորդի մեկնարկիչի վերանորոգում	հատ	25000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,059	Ֆորդի ռելե-ռեգուլյատորի վերանորոգում	հատ	8000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,06	Ֆորդի պրավոտկեքի փոխարինում	հատ	10000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,061	Ֆորդի լուսարձակի վերանորոգում	հատ	30000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,062	Կայունաբարի կանգնակի վերանորոգում стойка стабилизатора	հատ	12000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,063	Հարվածային ձգիչ փոխարինումով Ударная тяга	հատ	12000	2010թ. <<ֆորդ տրանզիտ>> մակնիշի ավտոմեքենաի համար
1,064	Հոդակապ փոխարինումով шаровой	հատ	12000	2017թ. Jin bei hiace մակնիշի ավտոմեքենայի համար
1,065	Բացքի ականոց ներքևի և վերևի փոխարինումով втулка развала	հատ	15000	2017թ. Jin bei hiace մակնիշի ավտոմեքենայի համար
1,066	Կոճղակ փոխարինումով колодка	հատ	22000	2017թ. Jin bei hiace մակնիշի ավտոմեքենայի համար
1,067	Արգելակի առջևի ափսե փոխարինումով передний диск тормоза	հատ	48000	2017թ. Jin bei hiace մակնիշի ավտոմեքենայի համար
1,068	Արգելակի հետևի ափսե փոխարինումով задний диск тормоза	հատ	45000	2017թ. Jin bei hiace մակնիշի ավտոմեքենայի համար
1,069	Խաչուկ փոխարինումով креставин	հատ	15000	2017թ. Jin bei hiace մակնիշի ավտոմեքենայի համար
1,07	Կախոց փոխարինումով подвесной	հատ	25000	2017թ. Jin bei hiace մակնիշի ավտոմեքենայի համար
1,071	Մեղմիչ առջևի փոխարինումով амортизатор	հատ	35000	2017թ. Jin bei hiace մակնիշի ավտոմեքենայի համար
1,072	Մեղմիչ հետևի փոխարինումով амортизатор	հատ	32000	2017թ. Jin bei hiace մակնիշի ավտոմեքենայի համար
1,073	Զսպանի թիթեղ փոխարինումով лист рессора	հատ	55000	2017թ. Jin bei hiace մակնիշի ավտոմեքենայի համար

1,074	Հովացուցչի ռեմեն փոխարինումով ремень вентилиатора	հատ	12000	2017թ. Jin bei hiace մակնիշի ավտոմեքենայի համար
1,075	Ռեմեն ձգող փոխարինումով	հատ	20000	2017թ. Jin bei hiace մակնիշի ավտոմեքենայի համար
1,076	Առջևի հարվածային ձգիչ փոխարինումով Ударная тяга	հատ	15000	2017թ. Jin bei hiace մակնիշի ավտոմեքենայի համար
1,077	Ծայրակալ փոխարինումով наконечник тяги	հատ	15000	2017թ. Jin bei hiace մակնիշի ավտոմեքենայի համար
1,078	Կայունարար փոխարինումով Стабилизатор	հատ	45000	2017թ. Jin bei hiace մակնիշի ավտոմեքենայի համար
1,079	Առանցքակալ փոխարինումով подшипник цапки	հատ	20000	2017թ. Jin bei hiace մակնիշի ավտոմեքենայի համար
1,08	Ձեռքի արգելակի տրոս փոխարինումով կարճ/երկար	հատ	12000	2017թ. Jin bei hiace մակնիշի ավտոմեքենայի համար
1,081	Աշխատանքային բաք փոխարինումով առջևի և հետևի рабочий бочок	հատ	30000	2017թ. Jin bei hiace մակնիշի ավտոմեքենայի համար
1,082	Զսպանի ականոց փոխարինումով втулка ресора	հատ	8000	2017թ. Jin bei hiace մակնիշի ավտոմեքենայի համար
1,083	Յուղ լուկոյլ փոխարինումով	հատ	2000	2017թ. Jin bei hiace մակնիշի ավտոմեքենայի համար
1,084	Յուղ 5/30 սինթետիկ փոխարինումով	հատ	4500	2017թ. Jin bei hiace մակնիշի ավտոմեքենայի համար
1,085	Յուղ տապ 15 փոխարինումով	հատ	3500	2017թ. Jin bei hiace մակնիշի ավտոմեքենայի համար
1,086	Թանձրամածուկ լիտոյլ փոխարինումով	հատ	3500	2017թ. Jin bei hiace մակնիշի ավտոմեքենայի համար
1,087	Յուղի զտիչ փոխարինումով	հատ	6000	2017թ. Jin bei hiace մակնիշի ավտոմեքենայի համար
1,088	Օդի զտիչ փոխարինումով	հատ	7000	2017թ. Jin bei hiace մակնիշի ավտոմեքենայի համար
1,089	Հետևի զսպան փոխարինումով	հատ	60000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար
1,09	Գլխավոր լիստ փոխարինումով	հատ	50000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար
1,091	Ենթագլխավոր լիստ փոխարինումով	հատ	15000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար
1,092	Բռունցքի հավաքածու փոխարինումով	հատ	30000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար
1,093	Հոդակապ փոխարինումով	հատ	8000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար
1,094	Կոճղակ առջևի փոխարինումով	հատ	20000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար
1,095	Կոճղակ հետևի փոխարինումով	հատ	20000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար
1,096	Հովացուցիչ փոխարինումով радиатор	հատ	65000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար
1,097	Շկոռնու հավաքածու փոխարինումով	հատ	15000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար
1,098	Ծայրակալ փոխարինումով	հատ	15000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար
1,099	Սկավառակ-սալիկ-առանցքակալ փոխարինումովдиск-плита-выжимной подшипник	հատ	150000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար
1,1	Խաչուկ փոխարինումով	հատ	13000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար
1,101	Սուպեր փոխարինումով	հատ	35000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար
1,102	ԱՌջևի արգելակի փոխ փոխարինումով	հատ	4000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար
1,103	Ստուպիցա հավաքածու փոխարինումով	հատ	40000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար
1,104	Ուժեղացուցիչ փոխարինումով	հատ	30000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար

1,105	Ղեկային կալոնկա փոխարինումով	հատ	42000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար
1,106	Կիսասոռնի կարճ և երկար փոխարինումով	հատ	40000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար
1,107	Գլխավոր բաք փոխարինումով	հատ	30000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար
1,108	Կոնուսի գլխավոր բաք փոխարինումով	հատ	35000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար
1,109	Զսպանի ռեզին սիլիկոնե փոխարինումով	հատ	5000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար
1,11	Մեկնարկիչ փոխարինումով	հատ	45000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար
1,111	Կուլիս փոխարինումով	հատ	33000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար
1,112	Եղանիկ փոխարինումով	հատ	18000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար
1,113	Կոնուսիտակի բաչոկ փոխարինումով	հատ	20000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար
1,114	Շկոռնու վերանորոգման հավաքածու փոխարինումով	հատ	12000	2017թ. Ուազ 39623 մակնիշի ավտոմեքենաի համար
	Ընդանուր		2580000	

ԳՆՈՐԴ

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ
ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Վանաձոր մ/ճ
Հ/Հ 1150004484110100
ՀՎՀՀ 0694592

Տնօրենի ժ/պ՝ Վ. Մկրտչյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Վ.Ն.Ս. Սերվ» ՍՊԸ
ք. Վանաձոր, Կ. Դեմիրճյան 1 բ
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
h/h 1150002715650100
ՀՎՀՀ 06940308

Տնօրեն՝ Վ. Գրիգորյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
« 29 » մարտի 2019 թ. կնքված
«ՎԲԿ-ԳՀԾՁԲ-19/23» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**									
1			մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
1	50111130	Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում	625 000	1 250 000	1 875 000	2 5000 00	3 125 000	3 750 000	4 3750 00	5 000 000	5 000 000	

ԳՆՈՐԴ

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ
ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Վանաձոր մ/ճ
Ð/Ð 1150004484110100
ÐìÐÐ 0694592

ÎÝûñ»Ýի ժ/պ՝ Վ. Մկրտչյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Վ.Ն.Ս. Սերվ» ՍՊԸ
ք. Վանաձոր, Կ. Դեմիրճյան 1 բ
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
h/h 1150002715650100
ՀՎՀՀ 06940308

Տնօրեն՝ Վ. Գրիգորյան

/ստորագրություն/
Կ.Տ